

3917

3918

3919

3920

891-995

8-15

Gleis

f. M...
[Signature]

891.99-1

Մ-

Հ Ա Յ Ե Լ Ի

I

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԿԱՐԱՊԵՏԻ ՄԱՏԻՆԵԱՆՅ



ԹԻՖԼԻՉ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՅԻ ՏՊԱՐԱՆ

1883

3188

Պ Ա Յ Մ Ն

ՊԱՅԾԱՌԱՓԱՅԼ ԻՇԻԱՆ,

ՆԱԴՕԼԵՕՆ ՅՈՎԿԱՆՆԻՍԵԱՆ ԱՄԱՏՈՒՆԻ.

Չեր երեքամեայ անխոնջ և տաժա-
նակիր աշխատութիւնը Հայ թատրո-
նական գործում, Չեր և իմ թատրո-
նական ընկերներիս առաջարկութիւն-
ները, պատճառ դարձան ինձ գրելու
բեմական ընթերցանութեան համար
այս ոտանաւորները. ուստի իմ թոյլ
և ուժիցս վեր պարտականութիւնը
կատարելով և այժմ տպագրելով նոյնը,
պատիւ եմ համարում ինձ նուիրել այն
Չեր վսեմ անուանը:

Աշխատասիրող:

Дозволено цензурою. Тифлисъ, 10 Сентября 1882 г.
Типографія И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 5.

ՄԱՍԻՆ ԵՍՊՈՍՏՈՒՄԵՍ

առաւ և զմասին յամենայն զմ
 ողորմելի քան զմեկն աստուծոյ զմ
 ողորմելի նմ զմ Նուծուցար մայիս
 մեկն յայնչապա աս սկիզբն յայնչ մայիս
 այնչ ճակ մաճուցար ուճուցար զգն
 զանա՛ն մաճ յայնչ զմեկն մայիսն
 յայնչ նմ յայնչ զգն զմեկն աստուծոյ
 զմեկն յայնչ աստուծոյ զմեկն սքիւտ
 և զմեկն յայնչ աստուծոյ նկա և յայնչ աստուծոյ
 մկա յայնչ աստուծոյ ճակ Նուծուցար նմ յայնչ
 զմեկն աստուծոյ նմսի զմ

զգնելոյ զմեկն զմեկն յայնչ
 զգնելոյ զմեկն զմեկն յայնչ
 յայնչ զմեկն զմեկն յայնչ յայնչ
 յայնչ զմեկն զմեկն յայնչ յայնչ
 յայնչ զմեկն զմեկն յայնչ յայնչ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Հայոց թատրոն, բեմ Հայկական
 Միշտ կրկնելով գլուխ տարան,
 Միթէ արժէ փող տալ, գնալ,
 Տեսնել բեմում Հայ դերասան:

Ուրիշ բան է, տեսնել բալետ,
 Յիրկ, կամ կլուբ, կամ մասկարատ,
 Կամ Սանտոսի սիրուն կօնցերտ,
 Որտեղ մարդս է ուրախ յաւետ:

Ուրիշ բան է, Հագուել, զուգուել,
 Ամբողջ օրը բուլվար չափել,
 «Մօզնի սվետները» միշտ կարգալ,
 Ու «րօմաններով» զարգանալ:

Իրաւն ասեմ, շատ զգվում եմ
 Հայ անունից, Հայ թատրոնից,
 Նաև զգվում, որ Հայ ծնալ
 Եւ մինչ ցայսօր Հայ մեծացալ:

Գիտէք, Հայեր իմ պատուական,
 Որ այսպիսի խօսողք շատ կան,
 Ոյք չար գործով մրոտում են
 Ազնիւ անուն մեր Հայկական:

Իսկ մենք լարենք մեր ոյժերը,
 Խորտակենք այդ անձինքները,
 Յետոյ, ազատ բանանք բերան,
 Գոռանք՝ կեցցէ բեմ հայկական:

ԱՐԻՍՏՈՎՐԱՏ

Արշին ու կէս սև մահուտ
 Մէջքիդ վերայ կպցրել,
 Էտ է էլի, քո խելքով
 Արիստոկրատ ես դառել:

Երկու կտոր ակակով
 Անճոռնի քիթդ թամբել,
 Բուլվար չափել սովորել,
 Արիստոկրատ ես դառել:

Մերսի, պարզօն բառերը
 Անտեղի բերանդ առած
 Ամենի մօտ կրկնում ես,
 Իբր արիստոկրատ ես դառած:

Պարոն, շորով, մերսիով
 Արիստոկրատ չես դառնալ,
 Գորա համար հարկաւոր է՝
 Ծատ ու շատ խելք ունենալ:

Վայն եկել է, մեզ տարել,
 Հայի վերջը մօտացել,

Որ ամեն ակնոցաւոր
 Արիստոկրատ է դառել:

ԻՆՉՈՎ ԵՄ ՊԱՆԱՍ

Հագուստներս շիկ, նոր մօդնի կարած,
 Բոլորի շուրջը ծիպծիպէք շարած,
 Գոյն զգոյն ծաղկով կուրծքս զարդարած,
 Ասացէք, խնդրեմ, ի՞նչով եմ պակաս:

Գլխիս շլեպալա, աչքերիս ակնոց,
 Միշտ բռնած ձեռքիս հովհար, հովանոց,
 Միթէ պակսել են ձեռքերիս ձեռնոց,
 Խնդրեմ, ասացէք, ի՞նչով եմ պակաս:

Մատներիս մատնիք, թւիս բրասլետ,
 Մաքուր լուացուած օձիք և մանժետ,
 Անգին օղերով ականջներս զուգած,
 Ասացէք, խնդրեմ, ի՞նչով եմ պակաս:

Վարպետ եմ քսուել, սիրուն զարդարուել,
 Գէմքս, այտերս գոյներով ներկել,
 Կառքով հանապազ փողոցներ չափել,
 Ուրիշ կանանցից ի՞նչով եմ պակաս:

Գիտեմ ես խնջոյք, բալետներ գնալ,
 Ջերմեռանդութեամբ թուղթ, լօտօ խաղալ,
 Սիրուիլ մարդկանցից, աշխատիլ դուր գալ,
 Ո՛չ, դուք ասացէք, ի՞նչով եմ պակաս:

Տօլլէին, Հէրվին եւ ջերմ յաճախորդ,
Ամեն մի շաբաթ նոր շորեր փոխող,
Նորութեանց համար փող չխնայող,
Խնդրեմ, ասացէք, ի՞նչով եմ պակաս:

Հողով եւ մարմնով մօզին հետևում,
Մօզնի ժուրնալներ յուճախ ստանում,
Կտրատում կարում, կարում կտրատում,
Դէհ, դուք ասացէք, ի՞նչով եմ պակաս:

Ասում են Հայ ես, չգիտես Հայերէն,
Ձուներս տեղեկութիւն քո տնէն, տեղէն,
Ձեզ եմ հարցնում, այժմ այդ է մօզէն,
Մի քաշուիք, ասէք, ի՞նչս է պակաս:

Անշուշտ կը պահէք դուք իմ խոստովանք,
Ասողներ կան՝ թէ խելքս է պակաս,
Այդ փոքր բանն էլ կարծեմ չէ զրկանք,
Հա՛, հա՛, հա՛, տեսէք, ի՞նչով եմ պակաս:

Միթէ արժէ հայ ծնունդ, իո՞ք ոտք
Հայ մեծանալ, հայ սնունդ,
Ուրիշ բան է այլ ազգին,

Նա ամեն տեղ ունի գին:

Իմ սիրուն որդիերանցը
Տալիս եմ այլ կրթութիւն, գար

Եւ վերջ յուսամ ստանալ
Նոցա բերնից գոհութիւն:

Օտար ազգի ուսուցիչք
Իմ տանիցն են անպակաս,
Եւ որդիքս նորանցից
Միշտ սովորում են իրանց դաս:

Մաղամ Մարի, միւսօ ժան,
Վարքով, բարքով պատուական,
Սուտ է այլոց հնարած՝
Իբրու են փախստական:

Ի՞նչ կամենան թող ասեն,
Նոցա շարժում, նոցա ձև
Երբէք չէք կարող գտնել
Հայ ուսուցչաց մէջ անձև:

Երբ նոքա իմ տուն մտան,
Իմ որդիքը մարդ դարձան,
Աստուած չանէ հայ գալոց
Ղրկեմ, այնտեղ փչանան:

Իմ այն տգեղ Մաշինկին
Այնքան վարպետ զուգեցին,
Որ քաղաքիս ողջ տղերք
Նորան գերի դարձուցին:

Աստուած, փրկիր, ազատիր,
Հայ դպրոցից, Հայ լեզուից,
Մօզէն ատող ու զգուող
Անկիրթ Հայ վարժապետից:

Ահա, քաղցրիկ իմ Հայեր,
Թէ ոյք են ձեր իշխաններ,
Եւ դուք դարձեա՛լ յոյս ունիք
Ունենալ լաւ ծնողներ:

ԻՆՔՆԱԿՈՉ ՄԵԾԵՐ

Մէկը դարձել չինովնիկ,
Չաղ ոռճիկ է ստանում,
Մէկն էլ անխիղճ կերպերով
Մեծ մեծ կաշառք է ուտում:

Մէկը իւղոտ փողրաթներ
Կամենում է վերցնել,
Ուրիշների տուն քանդել՝
Իրա տունը զարդարել:

Մէկն էլ աւազակ գողին
Գատարանում պաշտպանում,
Անխիղճ կերպով փող գճլում՝
Սպիտակը սււցնում:

Մէկը հմուտ գօկտօր է,
Շատ լաւ դեղեր տալ գիտէ,

Իսկ թէ ղեղերը չօգնեն՝
Արքայութիւն կըղըկէ:

Մէկն էլ քաղցից ստիպուած
Եկել, մարաքա մտել,
Ուզում է, որ հաց ճարի,
Սուտ ազգասէր է դառել:

Մէկը իբրև մի քանի
Լեզուներ է սովորել,
Հպարտացել ու փքուել,
Լեզուագէտ է հռչակուել:

Մէկը թղթեր մրոտում,
Սորան նորան հայհոյում,
Տգէտ, կոյր ամբօխի մէջ
Իրան անուն ժառանգում:

Ահա մեր գործողները,
Մեր ազգային ցեցերը,
Դժբաղդաբար չեն պակսում
Այս ինքնակոչ մեծերը:

ԻՆՉԵՐ ԿԱՆԷԻ

Եթէ լինէի դատաւոր կամ Տէր,
Քաղաքագլուխ, մեծ պաշտօնատէր,
Կամ թէ խմբադիր մի մեծ լրագրի,
Գիտէ՞ք՝ թէ յայնժամ ինչեր կանէի:

Եթէ լինէի ձայնաւոր քաղքի,
Կամ թէ գանձապահ քաղաքի արկղի,
Այս բանը հոգով, սրտով եմ սիրում,
Գիտէք՝ թէ յայնժամ ինչեր կանէի:

Եթէ լինէի ստարշին կլուբի,
Կամ թէ դիրեկտոր մեծ գումար բանկի,
Կամ թէ երեցփոխ ճոխ եկեղեցւոյ,
Գիտէք՝ թէ յայնժամ ինչեր կանէի:

Եթէ լինէի կտակահատար,
Կամ ազգականի որբոց խնամատար,
Այդ պաշտօնները ինձ լաւ են յայտնի,
Գիտէք՝ թէ յայնժամ ինչեր կանէի:

Եթէ լինէի ես հոգաբարձու
Փողերով հարուստ ուսումնարանի,
Կամ տեսուչ մի մեծ ճոխ գպրանոցի,
Գիտէք՝ թէ յայնժամ ինչեր կանէի:

Շատ բաներ մտքումս վաղուց եմ դրել,
Հոգով և սրտով պատրաստ եմ անել,
Եթէ այդ բաներ ես չեմ կատարում,
Ազգն է մեղաւոր, որ ինձ չէ ընտրում:

Քանի որ մէկը լաւ պաշտօն չունի,
Դատարկ խօսքերով շատ բաներ կանի.
Իսկ երբ ստացաւ այդ չաղ պաշտօնը,
Բաց իրա օգտից ոչինչ չի անի:

Կառնի լաւ տներ, կառքեր, ձիաներ,
Գեղեցիկ մի կին — Ֆրանս ու Չահէլ.
Բարօնի, կօմսի պէս ինքն էլ կապրի,
Ահա, տեսէք, թէ ինչեր նա կանի:

Ք Ե Լ Ե Խ

Սուրբ սեղան և մեռլահաց
Քելեխ է միշտ իմ կերած,
Այստեղ ինչ կայ ծածկելու,
Ես կարող եմ ասել բաց:

Քելեխի պէս համով բան,
Չկարծեմ, լինիք տեսած,
Մանաւանդ երբ լինում է

Շատ բլուտից պատրաստած:

Մարդուս կանէ նա զուարթ,
Կայտառ, արի և ուրախ,
Չէք տեսնում, քելեխակերք
Միշտ լինում են՝ տուղ, չաղ:

Աստուած օրհնել է Տփլիս
Փառաւոր քելեխներով,
Այդ բանում մեր հատ չկայ,
Կարեմ ասել պարծանքով:

Բայց նոր նոր ինչ որ մարդիկ,
Մօթրեւուլ, թոկից փախած,

Ուզում եմ քանդել այս կարգ,
Այդ կանոն Փրկչից օրհնած:

Կասեն քելեխի փողեր
Տուէք ուսումնարանին,
Ինչ է... մենք մնանք քաղցած,
Իրանք տանին ու ուտեն:

Եղբարք, ինչպէս տեսնում եմ
Աշխարհի վերջ մօտեցաւ,
Հայոց ազգը կորած է,
Եթէ քելեխ վերջացաւ:

Ո՞Վ Է ՄԵՂԱՒՈՐ

Խիստ թանգութիւնը տիրեց Տփլիսին,
Յուսահատութիւն պատեց ամենքին,
Միշտ հարցնում են խեղճերը խեղճին՝
Այս բաների մէջ ո՞վ է մեղաւոր:

Շուտ ծախսերը չափիցը անցաւ,
Խեղճ ժողովրդի վիճակ դառնացաւ,
Ամենքին պատեց, կսկիծ, վիշտ և ցաւ,
Այս բաների մէջ ո՞վ է մեղաւոր:

Առևտուրի մէջ չկայ ուղղութիւն,
Ամեն մի գործում միշտ խաբէյութիւն,
Շատ շատացել են, զրկանք, գողութիւն,
Այս բաների մէջ ո՞վ է մեղաւոր:

Անբոյժ ցաւերով շտաք վարակվեցան,
Սպանութիւններ հետզհետէ շտոցան,
Անկանոնութեանց չկայ մի վախճան,
Այս բաների մէջ ո՞վ է մեղաւոր:

Անմաքրութիւնով լիքն է քաղաքը,
Փոշին քոռացնում մարդոց աչքերը,
Կատղած շներով լիքն է քուչէքը,
Այս բաների մէջ ո՞վ է մեղաւոր:

Լկտի կանանցով լիքն է մեր այգին,
Խելքից հանում են պատանիներին,
Ամօթ է բերում ման գալ լաւ մարդին,
Այս բաների մէջ ո՞վ է մեղաւոր:

Քաղքի վարչութեան մեծ անդամները
Չէ՛ որ տեսնում են այս ամեն բանը,
Բայց միշտ յարգում են խօսքը, քան գործը,
Կարծեմ հասկացաք, ո՞վ է մեղաւոր:

Ա Ջ Գ Ա Ս Է Ր

Ի՛նչ ջանք, ի՛նչ հոգսեր ես չքաշեցի,
Մինչև հայ ազգին այստեղ հասցրի,
Գիշեր և ցերեկ իմ քուն, իմ դադար,
Ոյժ, խելք, միտք և անձ ազգին զոհեցի:

Երբոր լինում է խնջույք, կերուխում,
Բաժակը ձեռիս ոտի եմ կանգնում,

Մինչև հայ ազգի կենաց ճառ չասեմ,
Երբէք իմ բաժակ ես չեմ դատարկում:

Երբ բուլվարներում և պարտէզներում
Անհոգ, խառն ի խուռ ժողովուրդ ճեմում,
Ես այն ժամանակ գլուխս քարշ ձգած
Ազգիս կարիքը, ցաւն եմ մտածում:

Օտարը հային երբ անպատվում է,
Սիրտս այդ բանից սաստիկ ցաւում է,
Ես միշտ կրկնում եմ իմ ընկեր հային,
Թէ այդ վատ խօսքերը ինչո՞ւ տանում է:

Բաղձանքս եղել է միշտ հային տեսնել
Անդորր վիճակում, ազատ վտանգից,
Ես շատ եմ խօսել, բայց ճար չէ եղել,
Թո՞ղ հայն գանգատուի իրա չար բաղդից:

Միշտ ցանկութիւն եմ յայտնել, յորդորել
Բանալ թանգարան, հոգալ, զարդարել,
Փողապաշտութեամբ անհոգ կեանք վարել
Ես միշտ ատել եմ և ունիմ ատել:

Քանի քանիցս ասել եմ բանալ
Ուսման տաճարներ, որդւոց ուսում տալ,
Չէ որ ուսմամբ է մարդս մարդ դառնում,
Բայց ո՞վ է լսում և ո՞վ ընդունում:

Միշտ ցանկացել եմ հայ թատրոն գնալ,
Բայց երբ տեսնում եմ շատերն են գնում,
Իմն աւելորդ է. իսկ խորհուրդ տալու
Թատրոն գնալու, ես չեմ զլանում:

Դեռ կան այնպիսիք, որք կը բողոքեն,
Թէ հայ ազգի մէջ չկայ ազգասէր,
Այդ ասողները, իրաւ որ խենդ են,
Ի՛նձ՝ ազգասէրիս, մի՞թէ չեն տեսներ:

Մի քանիսներն էլ խելքին զոռ տալի,
Թէ ասածներդ գործով կատարի,
Ձեզ եմ հարցնում, մի՞թէ քիչ բան է,
Որ մարդ խորհրդով իւր ազգին օգնի:

Ինձնից աւելի հարուստներ շատ կան,
Ընդամենն ունիմ կէս միլիօն դրամ,
Չէ որ պիտ ապրինք ես, կինս, ծառաս,
Կարծեմ զրկանք է անձիս, որ փող տամ:

Ահա, հայերիս ազգասէրները,
Որք պահանջում են միշտ պատիւ և փառք,
Իսկ գործով, փողով օգնել իւր ազգին,
Նոքա գտնում են անձերին զրկանք:

Հայերիս տուներ այն օր քանդուեցաւ,
Երբ սուտ ազգասէրք այսքան շատացան,
Որք իրանց օգտի կամ պատուի համար
Դատարկ խօսքերով ազգասէր դարձան:

ՄԵՐ ԿՐԵՍՈՍՆԵՐԸ

Կասեն Հայն քաղցած է՝ չունի Հացի գին,
Գերի է դառել անօրէն տաճկին,
Գաղթում թողնում է իրա տուն և տեղ,
Միշտ չարչարվում է զերթ գառն անմեղ:
Ասացէք, խնդրեմ,
Ես ինչ անեմ:

Կասեն անտէր է և անօգնական,
Ձուրկ իրաւունքից, գուրկ լաւ ապրուստից,
Եթէ չհասնենք շուտով օգնութիւն,
Անշուշտ կը զրկուի Հայն իրա կեանքից:
Ասացէք, խնդրեմ,
Ես ինչ անեմ:

Կասեն Հայերը մերկ են և թշուառ,
Շատ ցաւալի է նոցա կեանք չուառ
Ունեցածներն էլ քուրդ խլում, տանում,
Անգամ նոցա կեանք նա չէ խնայում:
Ասացէք, խնդրեմ,
Ես ինչ անեմ:

Քանդուել են Հայի բերդ ու պարիսպներ,
Աճիւն են դարձել, վանքեր, տաճարներ,
Եղածն էլ տաճիկ աւերում քանդում,
Թշուառ Հային անյիշատակ թողնում:
Ասացէք, խնդրեմ,
Ես ինչ անեմ:

Ասում են Հայի խղճուկ օրիորդ
Մտնում է թօնիր, որ ծածկէ ամօթ,
Պարկեշտութիւնը նորան չէ թողնում
Երևիլ մարդկանց մերկ սկլոր, բոկատ:
Ասացէք, խնդրեմ,
Ես ինչ անեմ:

Ուսումնարաններ, վարչութիւն չկան,
Որ Հայոց զաւկաց զիտութիւն, լոյս տան,
Զկայ և մի ազգ, որ Հային գթայ,
Բուժէ վերքերը և ցաւը Հոգայ:
Ասացէք, խնդրեմ,
Ես ինչ անեմ:

Թէև գրուեցան յօդուածք, խօսուեցան,
Բայց Հայեր մինչ ցարդ ոչինչ չստացան
Ու անճարացեալ տանում են տանում
Հարուածք թշնամու անխօս և անձայն:
Ասացէք, խնդրեմ,
Ես ինչ անեմ:

Շատերը դիմում են ինձ՝ Կրեսոսիս,
Խնդրելով անել Հային օգնութիւն,
Ասելով՝ պարտ ենք Հոգալ մեր եղբարց,
Տալու կեանք, ապրուստ նա և փրկութիւն:
Ի՞նչեր կը խօսեն,
Բան չունին:

Այսպէս ահա՛, մեր շատ կրեսոսները
Երբ որ կիմանան խեղճ հայի ցաւեր,
Նոքա խիստ անհոգ կը պատասխանեն:

Թէ՛ «ի՛նչ կարող են» և «է՛հ, ի՛նչ անեն»:
Իսկ երբ կը խնդրես նոցա օգնութիւն,
Հոգալ, ազատել հայն ու հայի տուն,
Մինչդեռ նոցանից շատ յոյսեր ունիս,
Միշտ քո պատասխան կ'ընի՝ «բան չունիս»:

ՄԵՌԵԼՆԵՐԻ ԿԱՊԱԼԱՌՈՒՄԻ ԲՈՂՈՔԸ

Ոսկի առևտուրս սաստիկ նուազեց,
Խէր ու բարաքաթ թռան չքացան,
Պատճառ քաղաքը սուտ բժշկներով,
Դօկտօր, ֆերշալով եկան լցուեցան:

Հիւանդին դեղով շատ պահպանում են,
Ինչ փող որ ունի ձեռքից առնում են,
Մնացածներն էլ ապտէկն է տանում
Ու մեզի համար ոչինչ չէ մնում:

Դորանց պատճառով մեր կառք չբանեց,
Պատրաքաղ, դանակ, գուլջաւ ժանդոտեց,
Թէփշիք, ստաքներ, զրաֆին, շիշեր,
Սուփրա ու սալֆէտ դեղնեց, թողոտեց:

Համբարութիւնն էլ օր աւուր շատցաւ,
Կառք և պարազայք խիստ գեղեցկացաւ,

«Ողորմի Հոգուն» կողքին է գրած,
Այդ էլ մեր զլխին մէնոր վիշտ և ցաւ:

Սրհնած Տփխիսում կարգ կանոն չկայ,
Մարդ չի վայելում իւր արած գիւտը,
Ես հնարեցի մեռլի կապալը,
Հիմա ուրիշն է տանում օգուտը:

Ե Ս

Հայոց թատրոն ո՞վ հաստատեց,
Հայոց կլուբ ո՞վ սահմանեց,
Ընկերութիւնք ո՞վ հիմնարկեց,
Չէ որ արի ամեն բան ես:

Ո՞վ ծաղկեցրեց զբրկանութիւն,
Տուեց վսեմ գրուածք սիրուն,
Նաև ընտիր թարգմանութիւն,
Չէ որ արի այս ամեն ես:

Ո՞վ բացեց հայ ուսումնարան,
Թանգարան և գրադարան,
Թո՞ղ ուրիշի այդ փառք չտան,
Այդ բոլորը անողն եմ ես:

Անտէր, քաղցած խեղճ հայերին,
Մերկ ու թշուառ վանցիներին,
Ո՞վ գաղթական անտուն որբին
Խնամ տարու, չէ՞ դարձեալ ես:

Յօգուտ Հայոց ընկերութեան,
 Կիլիկեան և Արարատեան
 Ո՛վ Հաւաքեց նուէր այնքան,
 Եւ Հոգ տարաւ, չէ՛ կրկին ես:

Ո՛վ արծարծեց հարց հայկական,
 Ո՛վ գրեց միշտ յօգուածք այնքան,
 Բողոքներով ողջ եւրոպան
 Լցրեց, չէ՛ որ այդ կրկին ես:

Նուէրներով ո՞վ զարդարեց,
 Գերասնուհեաց սիրտը շահեց,
 Այլոց աչքեր շլացրեց,
 Չէ՛ որ դրանց անողն եմ ես:

Հայ թատրոնում ո՞վ է տիրում,
 Ում ցանկանում, ծափահարում,
 Ապստամբ կողմ միշտ պահպանում,
 Պէտք է ասել, որ մասամբ ես:

Ազգի համար շատ մեծ բաներ,
 Ազգի կարիք, ազգի գործեր,
 Ո՛վ է մինչ ցարդ ճիշտ հոգացեր,
 Պէտք է ասել, որ ես և ես:

Բայց թէ՛ ազգի տունն են քանդել,
 Ազգային փող խժռել, կերել,
 Ազգը մատնել, ազգը ծաղրել,
 Անողն դո՛ւք էք, և ո՛չ թէ՛ ես:

ՏԱՃԿՈ.— ՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստանը ընկած, կործան,
 Չէ՛ կտրվում նորա կական,
 Չկայ մէկը լինի պաշտպան,
 Բայց միշտ կասենք, որ մենք Հայ ենք:

Վանքեր աւեր, բերդեր քանդած,
 Սուրբ տաճարներ հողով ծածկած,
 Հայի խղճուկ որդիք ցրուած,
 Բայց միշտ կասենք, որ մենք Հայ ենք:

Սուրբ հարց երգոց տեղ նոցանում
 Քոռ բուն իրա վայն է կանչում,
 Աւեր բերդեր, տաճարք ողբում,
 Բայց միշտ կասենք, որ մենք Հայ ենք:

Նախնեաց շիրիմք հաւսար հողին,
 Չկան Վարդան և Գարեգին,
 Ո՛չ հետևողք նոցա շաւղին,
 Բայց միշտ կասենք, որ մենք Հայ ենք:

Ամայի են դարձել դաշտեր,
 Ցամքել յատակ, վճիտ ջրեր,
 Անգութ տաճիկ նոցա տիրեր,
 Բայց միշտ կասենք, որ մենք Հայ ենք:

Քաղցից հայեր միշտ կոտորուին,
 Սով է տիրում Հայաստանին,

Չուզենք օգնել խղճուկ Հային,
Լոկ խօսքերով կասենք՝ Հայ ենք:

Կը վայելէ ուղիղ Հային
Այսպէս թողնել իւր Հայրենին,
Չհոգալ թշուառ օրուայ մասին,
Դատարկ խօսքով կրկնել՝ Հայ ենք:

Երբ սփոփենք նորա ցաւեր,
Երբ փարատենք նորա վշտեր,
Քրդերի ձեռքից Հայն ազատենք,
Ապա ասենք թէ՛ մենք Հայ ենք:

ՄՇԵՑԻ ԶՕՐ ԿՏԱԿԸ

Դառն, սև օր շատ էք տարել, իմ որդիք,
Աղքատ, քաղցած, տկուր, բոկոտ մնացել,
Մեր տուն, մեր տեղ, սուրբ տաճարներ, Հայրենիք
Անգութ տաճիկ կործան, աւեր դարձուցել:

Չկայ մէկը, որ մեզ գլխայ ու խղճայ,
Բուժէ վէրքերս, մեր կարիքներ նա հոգայ,
Ճար մենք չունինք, խղճուկ որդիք, աչքիս լոյս,
Մեճ է Աստուած, չկտրենք մեր սրտի յոյս:

Մօտ է գարուն, չունիք արօր, որ վարէք,
Չունիք դպրոց, որ անդ գնաք բան սովրէք,
Ձեր մայր եղաւ անգութ տաճկին զոհ — գերի,
Մեճ եղբայրդ յօտարութեան թափառի:

Իսկ ձեր Հայրը Հալմաշ, խղճուկ, ծերացած,
Իրա յոյսը Ձեզ վրայ է նա դրած,
Աշխատեցէք, անմեղ փոքրիկ գառնուկներ,
Դառնալ ընկած Հայրենիքի պաշտպաններ:

Բնւ է տանենք այս օտար կեանք, խղճութիւն,
Բնւ է յուսալ ուրիշից ազատութիւն,
Կատարեցէք իմ կտակը, ո՛վ որդիք,
Ձեզմով միայն դուք կստանաք փրկութիւն:

Քաղցածներին խորհուրդ շատեր միշտ կուտան,
Բայց Հաց և ջուր, Հանդերձ, դրամ, չյուսան,
Այժմ մարդիկ խելքով ուսմով միշտ միայն,
Փափագելին և ցանկալին ստանան:

Մ Ն Ա Ն Կ

Հինգ, վեց անգամ սնանկացել,
Շատ փողեր եմ անուշ արել,
Բայց ունէի խելք ու շնորհք,
Մինչև այսօր չեմ բռնուել:

Բարեհոգի Հայրս կասէր՝
«Սնանկանալ մարիֆաթ չէ,
Բայց թէ կերար, լաւ մարսեցիր,
Մօրդ ծծի պէս հալալ է»:

Աշխատել եմ խեղճ երեւալ,
Ցոյց եմ տուել ինձ շատ ժուժկալ,

Դորա համար էլ պարտատէրքս

Սկսել են ինձ հաւատալ:

Ի՛նչ հարկ կայ, որ կնոջ վերայ

Հաստատես ինչ կայ, չկայ,

Յայտնի բան է դա լաւ բան չէ,

Պարտատէրը կը բարկանայ:

Իմ խելքով տուն, տեղ եմ շինել,

Առւտուրի դուքան բացել,

Քաղաքիս մէջ մի մարդ եմ ես,

Ամենք ցանկան ինձ բարևել:

Բայց կան մեզնում չիմար մարդիկ,

Որ չսովրած կարգ ու կանոն,

Բանտ են մտնում, խայտառակվում,

Մնանկանում խիստ անկանոն:

Մնանկանալ խիստ լաւ բան է,

Թէ որ մարդ լաւ ձեւը գիտնայ—

Պատիւ կը տան, փող կը դիզէ,

Հարուստ, խելօք մարդ կը դառնայ:

Բայց գիտնան որ, սպաս, թան չէ,

Ամեն չիմար մարդու բան չէ,

Մնանկանալ, փողեր ծպպել,

Այդ միայն իմ, և իմ բանն է:

ՄԵՐ ԳՐՈՂՆԵՐԸ

Ինչէր չեն գրում, ինչէր չեն անում

Մեր լուսաւոր տասնիններորդ դարում,

Ամեն համբալ էլ դարձել է գրող,

Ամեն տիրացու ընտիր ճառ ասող:

Մէկը քննում է դուրս եկած գրքեր,

Որ իրա ոյժից շատ բարձր է ու վեր,

Ի՛նչ է, գորանով ուզում է ցոյց տալ,

Որ աշխարհումս ինքն էլ կայ եղեր:

Մէկը գրում է թատրոնի ընդէզներ,

Չկռնելով որ ինքն է շատ տգէտ,

Թատրոն չէ տեսել և չէ յաճախում,

Բայց կուզէ ցոյց տալ իրան բանագէտ:

Մէկը հայհոյում մի մեծ պարոնի,

Որ խնայել է նորան իւր ոսկի,

Բայց այն պարոնը գովաբանվում էր

Միշտ և հանապազ, երբ կը տար ոսկի:

Մէկը հայհոյում խեղճ քահանային,

Որ չէ հրաւիրել մեռելի հացին,

Մէկն էլ դպրոցի հոգաբարձուներին,

Որ դուրս են արել այդ մեծ գրողին:

Մէկը չէ գրում իրա անունը,

Կամ թէ սկզբնատառն է անուն զնում,

Մէկն էլ չափից դուրս խելքին գոռ տալիս,
Իրա գրածը աստղերով կնքում:

Թէ ի՛նչ է իրանք մնան անպատիժ
Անիրաւ ձեռով ալլոց խածնելիս,
Կամ թէ ընդունեն յայտնի գրողի
Իրանց կեղծ յօդուած մարդիկ կարդալիս:

Ահա՛, սոքա են Հայոց գրողներ,
Խղճուկ լրագիրք, թուղթ մրտողներ,
Որք շիւղ կորոնեն ալլոց աչքերում,
Թողած աչքերի մեծ մեծ գերաններ:

ԾԱՆԻՐ ԶՔԵԶ

Մեզանում ամենք դարձան ուսուցիչ,
Լապտերով պէտք է փնտռել ուսանող,
Շատ շատացել են խօսողք և դատողք,
Ամենք կարծում են իրանց հասկացող:

Ամենք կարծում են իրանց գիտնական,
Քիչ կը գտնուի ճանչցող իրանց չափ,
Հուետոր մարդիկ, խելօք գլուխներ,
Կրետիկոսներ ունինք մենք անչափ:

Ծխականներում սովորած տղան
Իրան ուսուցիչ բարձր առարկայից

Նա կը համարէ, դասեր կը կարդայ,
Խլելով միջոց խեղճ մանուկներից:

Մեզնում ձգտում են ունենալ սրաշտօն,
Թէ և չեն պատրաստ այս բանի համար,
Այդ փոյթ չէ նրանց, միայն երևան,
Եւ հաց, ջուր ճարեն որկորի համար:

Մեզանում ամենք վիճում են դատում,
Իրանց ուսուցչաց չեն էլ հաւանում,
Իսկ անլի, դատարկ խորհուրդք անհատնում
Նոքա անխնա՛ միշտ են շուալլում:

Այդպիսիներին իմ խրատն այս է՝
Պարոն, պատուելի, չափք ճանաչիր,
Թէ մօրդ առաջեդ, գալլը քեզ կուտէ,
Հանգիստ, խելօք կ'աց և զքեզ ծանիր:

Ժ Ո Ղ Ո Վ

Մեր ուսուցչական ժողովներումը
Խիստ ուշ է ելնում մարդոց ձայները,
Թէ երեք ժամով ձեռքդ բարձրացնես՝
Հազիւ կարգ կը գայ, որ ձայնդ հանես:

Ամենքն են դատում, շատերն են վիճում,
Ականջիդ կասեմ, չեն էլ հասկանում,
Մի երկու դատարկ խօսքերի համար
Առանց ամչնալու ամբիօն բռնում:

Մի քանիսներն էլ աղաւաղելով
 Յետ առաջ նոյն միտք, խօսքեր կրկնելով,
 Ամբիօնիցը յայտնում են կարծիք՝
 Թէ պարոն...են Համակարծիք:

Մի քանիսներն էլ շատ բան ցանկանում,
 Ուսուցիչներին թոշակներ կտրում,
 Բայց մոռանում են, որ այս ըուպէին
 Կոպէկներ չկայ խեղճի գրպանում:

Առաջարկութիւնք անթիւ, անհամար,
 Որոնցից շատն էլ մեզի անյարմար,
 Ասողն ասում է, բայց ո՞վ է լսում,
 Ո՞վ ունի զլուխ այդ բանի համար:

Շատ են խօսողներ, քան թէ լսողներ,
 Առաջարկողներ, քան կատարողներ,
 Բայց դեռ սպասենք, գուցէ գտնուին
 Առողջ դատողներ, տոկուն գործողներ:

ԲԱԶԱԶԻՍՆԻ ԱՇԿԵՐՏ

Բազազխանի աշկերտ եմ,
 Արշիւնը կու սլլացնեմ,
 Թէ որ խամ մարդ ճանկս ընկնի,
 Ես գիտեմ, թէ ո՞նց քերթեմ:

Դուքնում համեստ կանգնում եմ,
 Տիրոջս աչք թող փչում եմ,
 Թէ քիչ դուքնից հեռացաւ՝
 Ապրանքն իսկոյն գողնում եմ:

Գիշերները բաղերում
 Անդադար քեֆ եմ անում.
 Շէն կենայ խազայինս
 Փողեր շատ ունի դախլում:

Թէ որ նա էլ կուտրացաւ՝
 Այդ էլ չէ ինձ համար ցաւ,
 Կ՛ճարեմ այլ սարսաղը,
 Կանեմ իմ սազ ու բազը:

Էս մեր քաղքի ադաթն է,
 Լաւ մարդը տեղ, զին չունէ,
 Ով որ թալնէ ու գողնայ՝
 Խօսքը հիմի նորանն է:

ՀԱՅՐԵՆԻՔ

Իմ պաշտելի քաղցր հայրենիք,
 Հողիդ, ջրիդ ես մատաղ,
 Քանի տարիք քեզնից հեռի
 Կարօտակէզ քաշեմ անի:

Լալով աչքերս կուրացաւ,
 Զրկուեցայ քո քաղցր տեսքից,
 Լեզուս բերնումս չորացաւ
 Քո սուրբ անուն երգելիս:

Ախ տօնելի սուրբ հայրենիք,
 Երկիր բարի, պտղաբեր,
 Անուն քաղցրիկ և սիրելի,
 Դրախտ, եղեմ ցանկալի:

Քեզնից հեռի չունիմ հանգիստ,
Սուգ է ինձի ամեն ժամ,
Քունը աչքիցս հեռացել է,
Ինձ չարչարում յարածամ:

Ի՞նչ կարող է ինձ ուրախացնել,
Երբ քեզանից կամ հեռի,
Թէև փառքեր, հարստութիւն,
Բայց ինձ համար տառելի:

Ա՛խ, լինելու է, ով իմ Աստուած,
Տեսնեմ իմ խեղճ հայրենիք,
Գրկեմ նորա սուրբ քարերը,
Տեսնեմ վայրեր ցանկալիք:

Ողորմած ես, գիտեմ, Աստուած,
Բարի, քաղցրիկ և գթած,
Յուսով եմ որ կը հասցնես
Ինձ տեսութեան հայրենեաց:

Կեանքիս թելը կտրելու մօտ
Հասնում է իմ վերջին ժամ,
Հայրենեացս մեռնել կարօտ՝
Կաղաչեմ մի տար, Աստուած:

Երբ լցուի իմ բաղձանաց վերջ,
Տեսնեմ իմ սէր հայրենիք,
Տեսնեմ ծնողք և սիրելիք՝
Ապա հոգիս հանգիստ տամ:



202

3917
3918
3919
3920

0008448
0008449
~~0008450~~
0008450
0008451



2013

